1.3. ՇՎԵԴԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՍԱՆԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ
17.07.2021-20.09.2021

Ներածություն

Հոդվածի արդիականությունը: Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի ուսումնասիրության **արդիականությունը** պայմանավորված է այդ երկրին բնորոշ տնտեսական և քաղաքական բարեփոխումների փորձի յուրահատկությունների և առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ և այդ լույսի ներքո՝ տնտեսական լայնամասշտաբ բարեփոխումներ իրականացնող երկրների, այդ թվում և՝ Հայաստանի Հանրապետությունում ընթացող տնտեսական վերափոխումների ոչ միանշանակ արդյունքների գնահատման ու վերաիմաստավորման, ինչպես նաև դրանց ճշգրտման նպատակահարմարությամբ:

Հետազոտության նպատակը և խնդիրները: Հետազոտության նպատակը Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի յուրահատկությունների համակողմանի ուսումնասիրությունն է, դրա լավագույն տարրերի բացահայտումը ու այլ երկրների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների ընթացքում դրանց տեղայնացման ու կիրառման հնարավորությունների ու ուղիների նախանշումը:

Հետազոտության ընթացքում խնդիր է դրվել՝

- ուսումնասիրել և բացահայտել այն մոտեցումների ու մեթոդների համախումբը, որոնք Շվեդիայի իշխանություններին, ինչպես նաև հասարակությանը հնարավորություն են տվել ապահովելու, մի կողմից, անհրաժեշտ բարեփոխումների արդյունավետությունը, արագությունն ու խորությունը, մյուս կողմից, չխաթարելու հասարակության մեջ առկա սոցիալական հավասարակշռությունը, երաշխավորելու սոցիալական պատշաճ երաշխիքների առկայությունը հանրության բոլոր շերտերի համար:
- Առանձնացնել ու դասակարգել զարգացման շվեդական մոդելի այն տարրերն և բաղադրիչները, որոնք կարող են կիրառելի լինել համադրելի երկրների, այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ այն երկրների համար, որոնք, այսպես կոչված «շոկային թերապիայի» սկզբունքով իրականացնելով տնտեսության լայնածավալ բարեփոխումներ, ձևավորել են ոչ թե բարձր զարգացած տնտեսություններ ու բարեկեցիկ հասարակություններ, այլ վերափոխումների դիմաց չափազանց բարձր սոցիալական գին են վճարել (ապաարդյունաբերականացում և մրցունակության անկում, տնտեսական

ցածր աճ, բարձր գնաճ, կոռուպցիայի և աղքատության խորացում, հասարակության բևեռացում և հանցավորության մակարդակի աճ)[1]:

- Հետազոտել երկարաժամկետ հատվածում Շվեդիայի տնտեսության կայունությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցիչների (տնտեսական աճ, գնաճ, գործազրկության մակարդակ, պետական պարտքի և աղքատության մակարդակ և այլն) և ինստիտուցիոնալ ռեֆորմների պարամետրերի միջև փոխկապվածությունները:
- Հետազոտել Շվեդիայի տնտեսական զարգացման ցուցիչների և երկրի միջազգային տնտեսական մրցունակությունը բնութագրող ցուցանիշների շարժը երկարաժամկետ հատվածում, ինչպես նաև դրանց միջև առկա փոխառնչությունները:
- Հետազոտել Շվեդիայի տնտեսության տեխնոլոգիական արդիականացման և հասարակության սոցիալական իրավիճակը բնութագրող պարամետրերի (Գլոբալ ինովացիոն ինդեքս, Ջինիի գործակից, աղքատության մակարդակ և այլն) շարժը և փոխազդեցությունները:

Թեմայի ուսումնասիրվածության աստիճանը: Առաջարկվող թեման, լինելով խիստ արդիական, ըստ էության տարբեր դիտանկյուններից ուսումնասիրվել է ինչպես շվեդ հայտնի տեսաբանների (Ա. Լինդբեկ, Թ. Անդերսեն, Բ. Հոլմսթրյոմ, Հ. Սյոդերստրյոմ, Պ. Լունդբորգ և այլք)[2], այնպես էլ միջազգային ճանաչում ունեցող այլազգի հետազոտողների կողմից[3]: Տնտեսագիտական գրականության մեջ առկա է տնտեսության շվեդական մոդելի և Շվեդիայի տնտեսական զարգացման փորձի ուսումնասիրությունների մեծ բազմազանություն: Հատկապես խորությամբ ուսումնասիրվել է Շվեդիայի տնտեսական մոդելը եվրոպական երկրների զարգացման փորձի ու առկա մոդելների հա-

---

[1] **Marangos, John** (2005). Shock Therapy and its Consequences in Transition Economies// Development (2005) 48(2), 70–78. doi:10.1057/palgrave.development.1100136.

[2] Տե՛ս, օրինակ, **Lindbeck, A.** (2006): The Welfare State – Background, Achievements, Problems, Research Institute of Industrial Economics, Working paper No. 662, Stockholm. https://www.ifn.se/Wfiles/wp/wp662.pdf, **Torben M. Andersen, Bengt Holmström, Seppo Honkapohja, Sixten Korkman, Hans Tson Söderström, Juhana Vartiainen** (2007) THE NORDIC MODEL: Embracing globalization and sharing risks. Printed in Yliopistopaino, Helsinki, 2007, 167 p. (https://economics.mit.edu/files/5726), **Lundborg, P.** (2005): Individual Wage Setting, Effi ciency Wages and Productivity in Sweden, FIEF Working Paper 205, Stockholm. https://www.researchgate.net/publication/5094623_Individual_Wage_Setting_Efficiency_Wages_and_Productivity_in_Sweden.

[3] Տե՛ս, օրինակ, **Honkapohja, S., Koskela, E., Leibfritz, W. and Uusitalo, R.** (2008): Economic Prosperity Recaptured:The Finnish Path from Crisis to Fast Growth, MIT Press. https://www.researchgate.net/publication/227458318_Economic_Prosperity_Recaptured_The_Finnish_Path_from_Crisis_to_Rapid_Growth, **Ari Kokko.** The Swedish Model. UNU-WIDER 2010 * Copenhagen Business School and Stockholm School of Economic. https://www.wider.unu.edu/sites/default/files/wp2010-88.pdf. **Tarmo Valkonen and Vesa Vihriälä** (2014). The Nordic model – challenged but capable of reform. Nordic Council of Ministers 2014. http://norden.diva-portal.org/smash/get/diva2:715939/FULLTEXT02.pdf.

մատեքստում[1]: Մյուս կողմից, շվեդական մոդելը և նրա արդիականացման խնդիրները համեմատաբար քիչ են ուսումնասիրվել զարգացող շուկաների և հատկապես նախկին սոցիալիստական երկրների տնտեսական բարեփոխումների փորձի գնահատման ու վերաիմաստավորման համատեքստում[2]: Սույն հետազոտության մեջ փորձ է արվել խնդիրները ուսումնասիրել և գնահատել հենց այդ դիտանկյունից:

Տնտեսության շվեդական մոդելի առանձնահատկությունները. գրականության քննական վերլուծություն

Սկսած 20-րդ դարի 60-ական թվականներից՝ Շվեդիայի կառավարող վերնախավերի կողմից իրականացված բարեփոխումները ուղեկցվել են բարձր տնտեսական աճով, ինչպես նաև հասարակության տարբեր խավերի ու շերտերի սոցիալական համաձայնության միանգամայն ոչ կոնֆլիկտային միջավայրով և սոցիալական արդարության փոխադարձորեն ընդունելի մակարդակով: Չնայած դրան՝ այն ունի զգալի առանձնահատկություններ և յուրօրինակ բնորոշ գծեր: «Շվեդական մոդելը» բխում է ընդհանուր սկանդինավյան կամ, երբեմն ասում են՝ «Հյուսիսային երկրների» (Շվեդիա, Նորվեգիա, Դանիա, Ֆինլանդիա, Իսլանդիա) տնտեսական զարգացման համատեքստից: Այդ մոդելը այսպես կոչված «Համընդհանուր բարօրության պետության» տարատեսակն է[3]: Երբեմն տնտեսության շվեդական կամ սկանդինավյան մոդելը տեսաբանները անվանում են «շվեդական սոցիալիզմի» մոդել[4]: Մասնավորապես՝ համընդհանուր բարօրության պետության հանրահայտ տեսաբաններից մեկը՝ տնտեսագիտության բնագավառի նոբելյան մրցանակակիր, շվեդ տնտեսագետ **Գունար Մյուրդալը** համարում էր, որ տնտեսական կյանքի կազմակերպման այդ մոդելը ենթադրում էր աշխատանքի շուկայում առավել ակտիվ քաղաքականություն, որտեղ աճող պետական հատվածը, ինչպես նաև կապիտալ ներդրումների և կապիտալ շինարարության կարգավորման մի շարք միջոցները օգտագործվում էին պահանջարկը համահարթելու և լրիվ զբաղվածությունն ապահովելու համար: Ըստ Մյուրդալի՝ շվեդական խառը տնտեսությունը ողջ աշխարհում հայտնի դարձավ շնորհիվ իր միջին

---

[1] Տե՛ս, օրինակ, **Tarmo Valkonen and Vesa Vihriälä** (2014). The Nordic model – challenged but capable of reform. Nordic Council of Ministers 2014. http://norden.diva-portal.org/smash/get/diva2:715939/FULLTEXT02.pdf

[2] Տե՛ս, օրինակ, **Кудров В. М.,** Мировая экономника: социально-экономические модели развития. М., Магистр, Инфра, 2011, стр. 23-25. **Адамская Л. В., Киселев А. В.,** Скандинавская модель экономического роста: применение в России // Мировые цивилизации, том 2, № 1 (2017) https://wcj.world.ru/PDF/10MZ117.pdf.

[3] Տե՛ս, օրինակ, **Torben M. Andersen, Bengt Holmström, Seppo Honkapohja, Sixten Korkman, Hans Tson Söderström, Juhana Vartiainen** (2007) . THE NORDIC MODEL Embracing globalization and sharing risks. Printed in Yliopistopaino, Helsinki, 2007. 167p. (https://economics.mit.edu/files/5726)

[4] **В Швеции правда удалось построить социализм?** Там «идеальный СССР»? Стыдные вопросы о шведской политике и «скандинавской модели»// https://meduza.io/feature/2018/09/11/v-shvetsii-pravda-udalos-postroit-sotsializm-tam-idealnyy-sssr.

ուղեգծի, որն ընկած էր անսանձ կապիտալիզմի և պլանային վարչական տնտեսության միջև[1]:

«Շվեդական սոցիալիզմի» մոդելի տարատեսակ ասպեկտներին անդրադարձել ու դրանց հիմնավորումներն են բերել մի շարք այլ շվեդ տնտեսագետներ, մասնավորապես՝ **Էրիկ Լունդբերգը, Ասսար Լինդբեկը, Յուհան Մյուրմանը, Նիլս Էլվանդերերը, Ռուդոլֆ Մեյդները, Պեր-Մարտին Մեյերսոնը:** Տեսաբանների այս խումբը ըստ էության տարբեր տեսանկյուններից հիմնավորել է տնտեսության շվեդական մոդելի յուրահատկությունները՝ համարելով, որ այդ մոդելի համատեքստը շատ դեպքերում քաղաքական է ու երբեմն հաշվի չի առնում երկարաժամկետ զարգացումները, ինչպես նաև բազմաթիվ ֆունդամենտալ գործոնների ազդեցությունները: Մասնավորապես՝ **Է. Լունդբերգը** իր հետազոտություններից մեկում ընդգծում է այն ցիկլայնությունը, որ բնորոշ է ցանկացած ազգային տնտեսությանը, ինչից զերծ չի եղել նաև Շվեդիայի տնտեսությունը[2]: Այս հանգամանքը շեշտում է նաև նեոլիբերալիզմի ժամանակակից տեսաբաններից մեկը՝ **Անդերս Ֆորսլունդը**[3]:

Մեթոդաբանություն: Սույն հոդվածում կիրառվել են հետազոտության մի շարք մեթոդներ, որոնք թույլ են տվել բացահայտել երկարաժամկետ հատվածում Շվեդիայի տնտեսական զարգացման փորձի ու ձևավորված տնտեսական մոդելի առանձնահատկությունները: Մասնավորապես՝ օգտագործվել են վիճակագրական շարքերի ձևավորման, տվյալների համակարգչային մշակման ու վերլուծության, համեմատական, պատմական, տրամաբանական և էքստրապոլյացիոն մեթոդների տարբեր կոմբինացիներ, որոնք թույլ են տվել բացահայտել շվեդիայի տնտեսության բարեփոխումների յուրահատկությունները: Կիրառվել են նաև ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդներ, որոնք թույլ են տվել հասկանալ շվեդական տնտեսության բարեփոխումների տարբեր կողմերը, ինչպես նաև դրանք համադրելով՝ կատարել համապատասխան ընդհանրացումներ և եզրակացություններ:

Վերլուծություն. Շվեդիայի տնտեսության զարգացման սոցիալամետ հետագիծը և արդյունքները

Վերջին առնվազն հինգ տասնամյակների ընթացքում Շվեդիայի տնտեսության դինամիկ զարգացումը պայմանավորված է ինչպես համակարգային ինստիտուցիոնալ տրանսֆորմացիայով, այնպես էլ տեխնոլոգիական նորագույն պարադիգմի տեխնիկական լուծումների լայնամասշտաբ կիրառություններով: Դրա հետևանքով աճել է և՛ աշխատանքի արտադրողականու-

---

[1] **Эклунд К.,** Эффективная экономика. Шведская модель. М., Экономика, 1991, с. 279.

[2] **Lundberg E.** (1985). The Rise and Fall of the Swedish Modell. Journal of Economic Literature, 1985, vol. 23, issue 1, 1-36.

[3] **Forslund A.,** The Swedish Model: Past, Present, and Future. In H. Giersch (ed.), *«Reforming the Welfare State»,* Springer-Verlag Berlin Heidelberg 1997, pp. 121-162. https://link.springer.com/chapter/10.1007/978-3-642-60497-3_8.

թյունը, և՛ բարձրացել է հասարակության բարեկեցության մակարդակը: Մի կողմից՝ հասարակության կրթվածության բարձր մակարդակը, սոցիալ-դեմոկրատական քաղաքականության ջատագով կառավարչական ու քաղաքական վերնախավերի զուսպ և հավասար հնարավորությունների ստեղծմանը միտված քաղաքականությունը հետպատերազմյան տասնամյակների ընթացքում նպաստել են Շվեդիայում սոցիալ-շուկայական սկզբունքների վրա հիմնված մրցունակ ու տեխնոլոգիապես արդիական տնտեսության ձևավորմանը, մյուս կողմից՝ ժողովրդավարական ինստիտուտների և ընթացակարգերի զարգացումը բարենպաստել է շվեդական հասարակության մեջ հանրային համերաշխության և համաձայնության մթնոլորտի արմատավորմանը:

Բոլոր դեպքերում՝ Շվեդիայի տնտեսության վերջին 40 տարվա զարգացումը աչքի է ընկել ինչպես տպավորիչ արդիականացման և գլոբալ առումով նրա մրցունակության բարձրացման քայլերով, այնպես էլ հասարակության կենսամակարդակի անշեղ աճով: Այդ ժամանակահատվածում երկրի ՀՆԱ-ն աճել է շուրջ 6 անգամ, իսկ բնակչության շնչիկ հաշվով եկամուտը՝ ավելի քան 5 անգամ (տե՛ս գծապատկեր 1)[1]: Ընդ որում՝ Շվեդիայի տնտեսական վիճակը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների փոխկապակցությունները այդ ժամանակահատվածում միայն մասամբ են տեղավորվել նախորդ երկու տասնամյակների զարգացումների տրամաբանության մեջ: Խոսքը առաջին հերթին տնտեսական աճի, գնաճի և գործազրկության մակարդակի փոխառնչությունների մասին է (տե՛ս գծապատկեր 1):



Գծապատկեր 1. *Շվեդիայի ՀՆԱ-ի (մլրդ ԱՄՆ դոլար), գնաճի (%) և գործազրկության մակարդակի (%)դինամիկան 1980-2020 թթ.*[2]

[1] https://databank.worldbank.org/source/world-development-indicators.

[2] Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Համաշխարհային տնտեսական ցուցիչներ» 1980-2020 թթ. ամենամյա տարեկան հաշվետվությունների հիման վրա: https://databank.worldbank.org/source/world-development-indicators.

Գծապատկեր 1-ից երևում է, որ Շվեդիայի հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների կորերի դասավորվածությունը 1990-ական թվականների սկզբներից ենթարկվել է որոշակի օրինաչափության։ Մինչ այդ՝ թերևս 1974-1975 թթ. համաշխարհային ֆինանսական ճգնաժամից հետո՝ 1980-ական թվականներից սկսած, նշված պարամետրերը, հատկապես գնաճի և գործազրկության մակարդակի շարժը բնութագրող ցուցիչները գտնվել են խիստ անհամապատասխան ու տարամետ շարժընթացի մեջ։ Այն, որ Շվեդիայի մակրոտնտեսական թրենդի համար հատկապես 2-րդ համաշխարհային պատերազմից հետո բնութագրական է եղել գործազրկության շատ ցածր մակարդակը (ըստ էության՝ լրիվ զբաղվածությունը), հանդիսացել է այդ երկրի տնտեսական վիճակը բնութագրող յուրօրինակ «այցեքարտերից» մեկը, սակայն, մյուս կողմից, ինչպես բազմաթիվ զարգացած այլ երկրներում, գրեթե 1980 թվականների ողջ տասնամյակը բնութագրական է եղել գնաճի շատ բարձր մակարդակով, ինչը, ճիշտ է, նվազող շարժընթացով, շարունակվել է ընդհուպ մինչև 1980-թվականների վերջերը (տե՛ս գծապատկեր 1)։

Շվեդական տնտեսության մեջ 1970-80-ական թվականներին հաստատված բարձր գնաճը թերևս այն «գինն» էր, որով ապահովվում էր երկրի, որպես սոցիալամետ բարձր վարկանիշ ունեցող տնտեսության գրեթե լրիվ զբաղվածությանը (մինչև 2 տոկոս) մոտ իրավիճակը, ինչպես նաև առողջապահության և կենսաթոշակային ապահովության համակարգերի առատ պետական ֆինանսավորումը։ Այդուհանդերձ, գրեթե տևական ժամանակ երկնիշ թվով գնաճային միջավայրը լուրջ խնդիրներ էր ստեղծել Շվեդիայի տնտեսության մեջ ներդրումների իրականացման տեսակետից, այդ պատճառով երկրի կենտրոնական բանկը 1980-ական թվականների կեսերից սկսեց հետևողականորեն սահմանափակել դրամական զանգվածը, բարձրացնել տոկոսադրույքները, իսկ Շվեդիայի այն ժամանակվա կառավարությունը սկսեց կրճատել ծախսերը, այդ թվում՝ պետական պարտքի ներգրավման ու դրա սպասարկման գծով։

Այսօրինակ ջանքերի շնորհիվ արդեն 1980-ական թվականների վերջին և 1990-ական թվականների սկզբներին երկրում գնաճը տեղափոխվել էր բնականոն շրջանակի մեջ (տարեկան 2-4 տոկոսի սահմաններում), այն դեպքում, երբ 1970-ական թվականների վերջին և 1980-ական թվականների սկզբներին այն արտահայտվում էր երկնիշ թվով (օրինակ՝ 1980 թ. գնաճը Շվեդիայում կազմել է 17.5 տոկոս, 1981 թ.՝ 12.1 տոկոս, 1982 թ.՝ 8.6 տոկոս)[1]։ Այդօրինակ քայլերի ու գործիքակազմերի գործադրման հետևանքով Շվեդիայի գնաճային միջավայրին 1990-ական թվականներից այս կողմ բնորոշ դարձան մեղմ ու ցածր գնաճի դրսևորումները, որոնք, տնտեսական ցիկլի փուլերից կախված, տատանվել են 2-4 տոկոսի սահմաններում (տե՛ս գծապատկեր 1)։

[1] Աղբյուրը՝ տե՛ս https://databank.worldbank.org/source/world-development-indicators.

Միևնույն ժամանակ, երբ խնդիր է դրված ամեն գնով ապահովել լրիվ զբաղվածություն, ապա միջին կամ երկարաժամկետ հատվածում անխուսափելի են դառնում կառուցվածքային բնույթի խնդիրները: Այդ պատճառով Շվեդիայում 1990-ական թվականների ընթացքում գործազրկության մակարդակը կայուն կերպով հանգրվանել էր այդ երկրի համար խիստ անսովոր՝ 6-14 տոկոս միջակայքում, միևնույն ժամանակ՝ 1990-1993 թվականներին, դիտարկվում էր երկրի ՀՆԱ-ի թույլ աճի և նույնիսկ անկման խիստ անբարենպաստ իրավիճակ (տե՛ս գծապատկեր 1): Այս պայմաններում Շվեդիայի իշխանությունների իրականացրած բարեփոխումները ենթադրում էին լուրջ ծախսեր, որոնք վերստին պետք է հանձնառեր հասարակությունը, առաջին հերթին՝ բարձր հարկերի տեսքով: Միևնույն ժամանակ այն ժամանակվա կառավարությունը ռեֆորմների ծրագրերը կյանքի կոչելու համար դիմեց լայնածավալ ներքին և արտաքին փոխառությունների, ինչի հետևանքով կտրուկ ավելացավ երկրի պետական պարտքը (տե՛ս գծապատկեր 2): Ընդ որում, ինչպես երևում է գծապատկերից, Շվեդիայի պետական պարտքի 1980-2000 թթ. շարժի կորագծին բնորոշ են եղել երկու գագաթներ (պիկեր), երբ պետական պարտքի բեռը աճել է 3-4 տարվա ընթացքում, որից հետո վերստին վերադարձել այդ երկրի համար «բնականոն» մակարդակին:

Դիտարկումները ցույց են տալիս, որ Շվեդիայի սոցիալամետ տնտեսության համար որպես բնութագրական մակարդակ առանձնանում է պետական պարտք/ՀՆԱ հարաբերկցության 35-45 տոկոս միջակայքը, ինչը, ճգնաժամային իրավիճակներում աճելով, տեղաշարժվում է մինչև 60-70 տոկոսանոց միջակայք:



Գծապատկեր 2. *Շվեդիայի ՀՆԱ-ի (մլրդ ԱՄՆ դոլար) և պետական պարտքի (մլրդ ԱՄՆ դոլար) մակարդակի դինամիկան 1980-2020 թթ.*[1]

[1] Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Համաշխարհային տնտեսական ցուցիչներ» 1980-2020 թթ. ամենամյա տարեկան հաշվետվությունների հիման վրա: https://databank.worldbank.org/source/world-development-indicators

Գծապատկեր 2-ից երևում է, որ Շվեդիայում 1990 թ. իրականացված լայնածավալ բարեփոխումների հետևանքով հնարավոր եղավ իջեցնել պետական պարտքի մակարդակը և միևնույն ժամանակ վերականգնել ու ապահովել կայուն և դինամիկ տնտեսական աճը: Շվեդական ռեֆորմների փորձը ցույց է տալիս, որ իրականացվող փոփոխությունները ու դրանց միջանկյալ արդյունքները շարունակաբար համադրվել ու զուգադրվել են դրանց սոցիալական ազդեցությունների հետ: Այդուհանդերձ, Շվեդիայի տնտեսության զարգացումները անխուսափելիորեն բերել են նրան, որ եկամտի ու բարեկեցության ընդհանուր մակարդակի բարձրացմանը զուգընթաց հասարակության մեջ տեղի է ունեցել անհավասարության մակարդակի զգալի աճ (տե՛ս գծապատկեր 3): Գծապատկերից երևում է, որ թեև 2003-2018 թթ. մեկ ու կես տասնամյակի ընթացքում Շվեդիայի մեկ շնչի հաշվով եկամուտը ավելացել է շուրջ մեկ ու կես անգամ՝ 2003 թ. 32 552 ԱՄՆ դոլարից 2018 թ. հասնելով 54 146 ԱՄՆ դոլարի, այդուհանդերձ, դրան զուգընթաց հասարակության մեջ մեծացել է եկամտային անհավասարությունը, որը ներկայացվում է Ջինիի գործակցի շարժի միջոցով (տե՛ս գծապատկեր 3):

Կարելի է փաստել, որ վերջին տասնամյակի ընթացքում Շվեդիայում տնտեսության զարգացման, տնտեսական աճի ու բարեկեցության ընդհանուր բարձրացմանը զուգընթաց տեղի է ունեցել աղքատության մակարդակի որոշակի բարձրացում: Հատկապես 2007-2008 թթ. համաշխարհային ճգնաժամին հաջորդած ժամանակահատվածում դիտարկվել է Շվեդիայի բնակչության սոցիալապես խոցելի շերտերի դրության հարաբերական վատթարացում (տե՛ս գծապատկեր 4):



Գծապատկեր 3. *Շվեդիայի մեկ շնչի հաշվով եկամտի (ԱՄՆ դոլար) և ըստ եկամուտների անհավասարության՝ Ջինիի գործակցի դինամիկան 2003-2018 թթ.*[1]

[1] Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Համաշխարհային տնտեսական ցուցիչներ» ամենամյա տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) 2003-2018 թթ.

Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ հասարակության այն մասը, որը ներկայացնում է ներգաղթյալների բավականին ստվար զանգվածը, շվեդական հասարակությանը դրա սոցիալական ինտեգրման և բարեկեցության որոշակի մակարդակին հասնելու համար բախվում է լուրջ խնդիրների, ինչն էլ արտացոլվում է վիճակագրական այդօրինակ համապատկերում: Այսպես, եթե 2007 թ. աղքատության մակարդակը Շվեդիայում կազմել է 13.5 տոկոս, ապա 2018 թ. այն արդեն 17.1 տոկոս էր (տե՛ս գծապատկեր 4):



Գծապատկեր 4. *Շվեդիայի մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ի (ԱՄՆ դոլար) և աղքատության մակարդակի դինամիկան 2003-2018 թթ.*[1]

Կարելի է նկատել, որ աղքատության մակարդակի աճը շվեդական հասարակության մեջ որոշակի խնդիրներ և մարտահրավերներ է հարուցում: 2020 թ. բռնկված COVID-19 համավարակը այս տեսակետից է՛լ ավելի է սրել այդ խնդիրը: Սակայն ավանդաբար աղքատության աճի զսպման ու պետական բյուջեի միջոցով եկամուտների զգալի վերաբաշխման շնորհիվ տնական ժամանակահատվածում հնարավոր է եղել շվեդական հասարակության մեջ ապահովել նրան ավանդաբար բնորոշ հանրային համերաշխության մթնոլորտը: Ու այդ ամենը հնարավոր է եղել տնային տնտեսությունների և բիզնեսի վրա հարկային բավականին լուրջ բեռի առկայության պայմաններում: Մասնավորապես՝ խնդիրը վերաբերում է երկրի կենսաթոշակային ապահովման համակարգին:

Փաստենք, որ Շվեդիայի 10 միլիոն բնակչության շուրջ 20 տոկոսը 65 տարեկանից բարձր մարդիկ են, որոնց կենսաթոշակային ապահովումը գործող ստանդարտներին համապատասխան հետզհետե ավելի է դժվարանում: Շվե-

---

ժամանակահատվածի տվյալների հիման վրա https://databank.worldbank.org/source/world-development-indicators, https://stats.oecd.org/

[1] Աղբյուրը՝ տե՛ս https://databank.worldbank.org/source/world-development-indicators, https://stats.oecd.org/

դիայում սոցիալական պարտադիր վճարումը (կենսաթոշակային եկամուտը) կազմում է աշխատավարձի 16 տոկոսը, ևս 2.5 տոկոսի վճարում արվում է անհատական կուտակային կենսաթոշակային հաշվին[1]: Շվեդիայում ֆիզիկական անձանցից գանձվող անձնական եկամտային հարկը կազմում է ընդհանուր անվանական եկամտի 43 տոկոսը, որից սոցիալական ընդհանուր հարկը կազմում է 29.2 տոկոս[2]:

Շվեդիայի տնտեսական թռիչքի հիմնասյուները, անշուշտ, հանդիսացել են նրա ինստիտուցիոնալ համակարգի բաղադրիչները: Օրինապահությունը, պատշաճ հարկահպատակությունը, կոռուպցիայի և հանցավորության ցածր մակարդակը Շվեդիայում մշտապես ռեսուրսներ են ձերբազատել զարգացման ու տեխնոլոգիական արդիականացման խնդիրների լուծման համար: Համաշխարհային տնտեսական ֆորումի կողմից հրապարակվող տարեկան զեկույցներում Շվեդիան շարունակաբար այդ ցանկերի վերին հորիզոնականներում է և շատ դեպքերում առավել նպաստավոր դիրքերում է, քան աշխարհի բարձր զարգացած բազմաթիվ այլ երկրներ: Ընդ որում՝ ակնհայտորեն Շվեդիայի մրցունակության ցուցիչները մշտապես զուգադրվում են հասարակության մեջ ստեղծված եկամտի հնարավորինս արդար բաշխման (ինչը ներկայացվում է Ջինիի գործակցի միջոցով) և զարգացման ներառականությունը բնութագրող մյուս ցուցիչների հետ (տե՛ս գծապատկեր 5):



Գծապատկեր 5. *Շվեդիայի՝ ըստ եկամուտների անհավասարության Ջինիի գործակցի և Համաշխարհայի մրցունակության ինդեքսի դինամիկան 2007-2020 թթ.*[3]

---

[1] Как в Швеции устроена забота о пожилых людях: https://ru.sweden.se/lyudi-i-obschestvo/obschestvo/starost-v-shvecii

[2] Налоги на доходы физических лиц выше в скандинавских странах не только процентом. http://www.fingramota.org/lichnye-finansy/nalogi/item/3817-nalogi-na-dokhody-fizicheskikh-lits-vyshe-v-skandinavskikh-stranakh-ne-tolko-protsentom.

[3] Գծապատկերը կազմվել է Համաշխարհային բանկի կողմից հրապարակվող «Համաշխարհային տնտեսական ցուցիչներ» ամենամյա տարեկան հաշվետվությունների, ինչպես նաև Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության (OECD) 2003-2018 թթ. ժամանակա-

Սակայն բոլոր ցուցիչների գծով չէ, որ Շվեդիայի մրցունակության ինդեքսը մշտապես ներկայանում է ամենաբարձր կատարողականներով: Դրանով հանդերձ, հատկապես վերջին 5-6 տարիներին մրցունակության ինդեքսի ցուցիչով աշխարհում դիրքավորմամբ Շվեդիան որոշակի հետընթաց է ունեցել: Եթե մինչև 2014 թ. Շվեդիան մրցունակության ցուցիչով աշխարհի շուրջ 150 երկրների մեջ կայուն կերպով դիրքավորված էր ցանկի երկրների առաջին հնգյակում, ապա արդեն 2015 թվականից սկսած այդ երկիրը դիրքափոխվել ու տեղավորվել է երկրների ցանկի երկրորդ հնգյակում, ասել է թե՝ մրցունակության որոշ բաղադրիչների գծով անկում է ունեցել[1]:

Այդուհանդերձ, վերջին տարիներին Շվեդիայի որոշակի հետընթացը պայմանավորված է այսպես կոչված նոր տեխնոլոգիական պարադիգմի տեխնոլոգիաների ստեղծման կամ փոխառման դժվարություններով, ինչը որոշակի օբյեկտիվ հիմքեր ունի, առաջին հերթին՝ կառուցվածքային բնույթի: Շվեդիայի համար առավել մեծ դժվարությունն այն է, որ համակարգային տեխնոլոգիական անցման պայմաններում շատ մեծ ճնշման են ենթարկվում եկամտի բաշխման ու վերաբաշխման, սոցիալական արդարության՝ տասնամյակներով հաստատված համակարգերը:

Դիտարկումները ցույց են տալիս, որ վերջին 5-6 տարիներին Շվեդիայում նկատվում են, մի կողմից, ըստ եկամտի հասարակության բևեռացման աճի որոշակի միտումներ (ըստ Ջինիի գործակցի շարժի), մյուս կողմից՝ նորարարությունների ոլորտի ցուցիչների (ըստ Գլոբալ ինովացիոն ինդեքսի շարժի) նկատելի վատթարացում (տե՛ս գծապատկեր 6):



Գծապատկեր 6. *Շվեդիայի՝ ըստ եկամուտների անհավասարության Ջինիի գործակցի և Գլոբալ ինովացիոն ինդեքսի դինամիկան 2011-2020 թթ.*[2]

հատվածի տվյալների հիման վրա https://databank.worldbank.org/source/world-development-indicators, https://stats.oecd.org/

[1] Աղբյուրը՝ ըստ Համաշխարհային տնտեսական ֆորումի https://tradingeconomics.com/sweden/competitiveness-rank.

[2] Գծապատկերը կազմվել է Տնտեսական համագործակցության և զարգացման կազմակերպության

Գծապատկեր 6-ից երևում է, որ վերջին տասնամյակի ընթացքում նորարարությունների շարժընթացը ու դրանց արմատավորումը որոշակիորեն ազդել են եկամտի բաշխման գործընթացների վրա, ինչը դրսևորվել է Շվեդիայի Ջինիի գործակցի և Գլոբալ ինովացիոն ինդեքսի ցուցիչի միջև սկզբում զուգամետ (2013-2017 թթ.), իսկ հետո՝ տարամետ (2017-2020 թթ.) հետագծերի տեսքով, ընդ որում՝ հասարակության մեջ եկամտի բաշխման անհավասարությունը ենթադրող Ջինիի գործակիցն աճել է, իսկ գլոբալ ինովացիոն ինդեքսը նվազել է:

Հետազոտության գիտական նորույթը: Հետազոտության նորույթը կայանում է այն թեզի հիմնավորման մեջ, որի համաձայն՝ հանքային ռեսուրսներով ու էներգակիրներով ոչ հարուստ երկրները, որոնցից է Շվեդիան, կարող են զարգացման, արդիականացման ու բարեկեցության թռիչք ապահովել միայն այն պարագայում, եթե բարեփոխումների ղեկը ստանձնած կառավարող վերնախավերը դրանց միջանկյալ արդյունքները մշտապես համադրեն խելամիտ ու հավասարակշռված սոցիալական քաղաքականության հետ և վերափոխումների բոլոր փուլերում ստանան հասարակության լայն զանգվածների աջակցությունը, ինչպես նաև պայմաններ ստեղծեն հանրային-քաղաքական և տնտեսական կյանքում նրանց հնարավորինս լայն ներգրավվածության համար:

Եզրակացություն

Շվեդիայի տնտեսության զարգացման փորձի և տնտեսական մոդելի ուսումնասիրությունը թույլ է տալիս կատարել մի շարք եզրակացություններ, որոնք հանգում են հետևյալին.

1. Շվեդիայի տնտեսական բարեփոխումների ու զարգացման փորձից բխող ուսանելի հետևություններից մեկը վերաբերում է ռեֆորմների ու տեխնոլոգիական արդիականցման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման և օգտագործման մեխանիզմներին: Շվեդիան, չունենալով հիմնային էներգակիրներ, լինելով մեկ շնչի հաշվով ցածր եկամուտ ունեցող երկիր, կարողացել է զարգացման ու արդիականացման անհրաժեշտ ռեսուրսներ ձևավորել և դրանք ուղղորդել տնտեսության տեխնոլոգիական վերազինմանը և մրցունակ արտադրական կլաստերների ստեղծմանը: Դա հնարավոր է եղել երկրի առատ հանքային հանածոներից և այլ բնական ռեսուրսներից (մետաղներ, ածուխ, փայտանյութ, էլակտրաէներգիա և այլն) ստացված եկամուտների մեծ մասը պետական խողովակներով վերաուղղորդել տնտեսության մեջ ավելացված արժեքի մեծ մասաբաժին

(OECD), Մտավոր սեփականության համաշխարհային կազմակերպության (WIPO), Կոռնելի համալսարանի և Միջազգային բիզնես-դպրոցի ինստիտուտի (INSEAD) կողմից հաշվարկվող Համաշխարհային նորարարությունների ցուցիչի (Global Innovation Index) 2011-2020 թթ. ժամանակահատվածի տվյալների հիման վրա https://stats.oecd.org/, http://www.globalinnovationindex.org/

պարունակող, տեխնոլոգիապես բարդ ու արտահանման մեծ ներուժ ունեցող արտադրական շղթաների ձևավորմանը:

2. Պետական-մասնավոր համագործակցության շվեդական մոդելը, որը նաև հիմնված է արհմիությունների լայն աջակցության վրա, թույլ է տվել ձևավորել ու զարգացնել միջազգային մասշտաբներով մրցունակ տնտեսական կլաստերներ: Շվեդիայի տնտեսության բազային բազմաթիվ ճյուղեր ունեն պետական կամ պետական-մասնավոր կարգավիճակ: Հատկապես խոսքը վերաբերում է հանքարդյունաբերությանը, տրանսպորտին, կապի համակարգին, մետալուրգիական ընկերություններին, ենթակառուցվածքներին, կրթության և առողջապահության ոլորտներին:
3. Շվեդիայի տնտեսության մեջ որոշիչ գործոն է հանդիսանում կոոպերատիվ համակարգը, ընդ որում՝ դա վերաբերում է ոչ միայն գյուղատնտեսությանը, այլև արդյունաբերության, շինարարության և մանրածախ առևտրի ոլորտներին: Կոոպերատիվ շարժումը Շվեդիայում լայն իմաստով լուրջ հակակշիռ է մենաշնորհացման միտումներին և թույլ է տալիս ապահովել ինչպես միջին խավի զարգացման, այնպես էլ սոցիալական համերաշխության, հավասար հնարավորությունների իրացման ու արդարության հաստատման գործընթացները:
4. Շվեդիայի տնտեսական մոդելի ու օրինակելի զարգացման հաջողվածության գրավականներից մեկը բարեփոխումների քաղաքականության մշտական համադրումն ու ճշգրտումն է սոցիալական ազդեցությունների, հավասար հնարավորությունների ապահովման ու եկամտի հնարավորինս արդար բաշխման սկզբունքների ու պահանջների հետ: Այլ կերպ ասած՝ տնական բարեփոխումների ու ինստիտուցիոնալ տրանսֆորմացիայի պատասխանատուները մշտապես հաշվի են նստել հասարակության բոլոր շերտերի ու խավերի կենսամակարդակի ու ամբողջության մեջ՝ կյանքի որակի վրա ազդեցությունների ու դրանց սոցիալական հետևանքների հետ:
5. Շվեդիայի տնտեսական վերելքի ու զարգացման հիմնապայմաններից մեկն էլ երկրի կառավարության կողմից աշխատանքի շուկայի կարգավորման ու զբաղվածության արդյունավետ քաղաքականությունն է: Որպես մեկնակետ ունենալով աշխատանքի շուկայում լրիվ զբաղվածությանը մոտ քաղաքականություն վարելու մարտահրավերը՝ Շվեդիայի իշխանությունները շարունակական ջանքեր և քաղաքականության արդյունավետ գործիքակազմեր են կիրառել՝ ուղղված որակյալ աշխատուժի ձևավորմանն ու մրցունակ մարդկային կապիտալի պաշարի կուտակմանը: Խոսքը հատկապես վերաբերում է որակյալ ու մրցունակ հանրակրթական ու համալսարանական կլաստերների, ինչպես նաև գիտական հետազոտությունների ու նորարարությունների առևտրայնացման միջազ-

գային չափանիշներով մրցունակ համակարգերի ստեղծմանը և ինստիտուցիոնալացմանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. «Transparency International 2020» վարկանիշում Շվեդիան զբաղեցրել է 3-րդ տեղը, https://www.transparency.org/ru/news/cpi-2020-global-highlights.
2. Адамская Л.В., Киселев А.В., Скандинавская модель экономического роста: применение в России // Мировые цивилизации, том 2, № 1 (2017) https://wcj.world.ru/PDF/10MZ117.pdf.
3. В Швеции правда удалось построить социализм? Там «идеальный СССР»? Стыдные вопросы о шведской политике и «скандинавской модели»// https://meduza.io/feature/2018/09/11/v-shvetsii-pravda-udalos-postroit-sotsializm-tam-idealnyy-sssr.
4. Налоги на доходы физических лиц выше в скандинавских странах не только процентом. http://www.fingramota.org/lichnye-finansy/nalogi/item/3817-nalogi-na-dokhody-fizicheskikh-lits-vyshe-v-skandinavskikh-stranakh-ne-tolko-protsentom.
5. Йелле Виссер, Профсоюзы на распутье. Рабочий документ MOT/ACTRAV – Женева, Международная организация труда, 2020, с. 21-22. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---actrav/documents/publication/wcms_752230.pdf.
6. Как в Швеции устроена забота о пожилых людях: https://ru.sweden.se/lyudi-i-obschestvo/obschestvo/starost-v-shvecii
7. Кудров В.М., Мировая экономника: социально-экономические модели развития. М., Магистр, Инфра, 2011, стр. 23-25.
8. Элкунд К., Эффективная экономика. Шведская модель. М., Экономика,1991. с. 279.
9. Andersen T.M, Holmström B. & all (2007). The Nordic Model — Embracing globalization and sharing risks// The Research Institute of the Finnish Economy (ETLA), Printed in Yliopistopaino, Helsinki, 2007, pp. 13-15. https://www.etla.fi/wp-content/uploads/2012/09/B232.pdf.
10. Ari Kokko, The Swedish Model. UNU-WIDER 2010 * Copenhagen Business School and Stockholm School of Economic. https://www.wider.unu.edu/sites/default/files/wp2010-88.pdf
11. Forslund A., The Swedish Model: Past, Present, and Future. In H. Giersch (ed.), *«Reforming the Welfare State»,* Springer-Verlag Berlin Heidelberg 1997, pp. 121-162. https://link.springer.com/chapter/10.1007/978-3-642-60497-3_8
12. Honkapohja, S., Koskela, E., Leibfritz, W. and Uusitalo, R. (2008): Economic Prosperity Recaptured:The Finnish Path from Crisis to Fast Growth, MIT Press. https://www.researchgate.net/publication/227458318_Economic_Prosperity_Recaptured_The_Finnish_Path_from_Crisis_to_Rapid_Growth

13. Lindbeck, A. (2006): The Welfare State – Background, Achievements, Problems, Research Institute of Industrial Economics, Working paper No. 662, Stockholm. https://www.ifn.se/Wfiles/wp/wp662.pdf.
14. Lundberg E. (1985). The Rise and Fall of the Swedish Modell. Journal of Economic Literature, 1985, vol. 23, issue 1, 1-36.
15. Marangos, John (2005). Shock Therapy and its Consequences in Transition Economies// Development (2005) 48(2), 70–78. doi:10.1057/palgrave.development.1100136.
16. Moses, Julia (2019). "The Reluctant Planner: T. H. Marshall and Political Thought in British Social Policy". In Goldman, Lawrence (ed.). *Welfare and Social Policy in Britain Since 1870: Essays in Honour of Jose Harris*. Oxford: Oxford University Press. p. 127. doi:10.1093/oso/9780198833048.003.0007
17. Tarmo Valkonen and Vesa Vihriälä (2014). The Nordic model – challenged but capable of reform. Nordic Council of Ministers 2014. http://norden.diva-portal.org/smash/get/diva2:715939/FULLTEXT02.pdf
18. Torben M. Andersen, Bengt Holmström, Seppo Honkapohja, Sixten Korkman, Hans Tson Söderström, Juhana Vartiainen (2007) THE NORDIC MODEL: Embracing globalization and sharing risks. Printed in Yliopistopaino, Helsinki, 2007, 167 p. https://economics.mit.edu/files/5726.
19. Tragatdh L., (2013). The secret of their success // The Nordic countries are probably the best-governed in the world//https://www.economist.com/special-report/2013/01/31/the-secret-of-their-success
20. https://databank.worldbank.org/source/world-development-indicators, https://stats.oecd.org/
21. https://tradingeconomics.com/sweden/competitiveness-rank
22. http://www.globalinnovationindex.org/

Reference

1. «Transparency International 2020» varkanishowm Shvedian zbaghecrel e' 3-rd teghy', https://www.transparency.org/ru/news/cpi-2020-global-highlights
2. Adamskaja L.V., Kiselev A.V. Skandinavskaja model' jekonomicheskogo rosta: primenenie v Rossii // Mirovye civilizacii Tom 2, #1 (2017) https://wcj.world.ru/PDF/10MZ117.pdf
3. V Shvecii pravda udalos' postroit' socializm? Tam «ideal'nyj SSSR»? Stydnye voprosy o shvedskoj politike i «skandinavskoj modeli»// https://meduza.io/feature/2018/09/11/v-shvetsii-pravda-udalos-postroit-sotsializm-tam-idealnyy-sssr
4. Nalogi na dohody fizicheskih lic vyshe v skandinavskih stranah ne tol'ko procentom. http://www.fingramota.org/lichnye-finansy/nalogi/item/3817-nalogi-na-dokhody-fizicheskikh-lits-vyshe-v-skandinavskikh-stranakh-ne-tolko-protsentom

5. Jelle Visser. Profsojuzy na rasput'e. Rabochij dokument MOT/ACTRAV – Zheneva, Mezhdunarodnaja organizacija truda, 2020, s. 21-22. https://www.ilo.org/wcmsp5/groups/public/---ed_dialogue/---actrav/documents/publication/wcms_752230.pdf
6. Kak v Shvecii ustroena zabota o pozhilyh ljudjah: https://ru.sweden.se/lyudi-i-obschestvo/obschestvo/starost-v-shvecii
7. Kudrov V.M., Mirovaja jekonomnika: social'no-jekonomicheskie modeli razvitija. M., Magistr, Infra_M, 2011, str. 23-25.
8. Eklund K., Jeffektivnaja jekonomika. Shvedskaja model'. - M.: Jekonomika,1991. - s. 279.
9. Andersen T.M, Holmström B. & all (2007). The Nordic Model — Embracing globalization and sharing risks// The Research Institute of the Finnish Economy (ETLA), Printed in Yliopistopaino, Helsinki, 2007, pp. 13-15. https://www.etla.fi/wp-content/uploads/2012/09/B232.pdf
10. Ari Kokko. The Swedish Model. UNU-WIDER 2010 * Copenhagen Business School and Stockholm School of Economic. https://www.wider.unu.edu/sites/default/files/wp2010-88.pdf
11. Forslund A. The Swedish Model: Past, Present, and Future. In H. Giersch (ed.), *«Reforming the Welfare State»,* Springer-Verlag Berlin Heidelberg 1997, pp 121-162. https://link.springer.com/chapter/10.1007/978-3-642-60497-3_8
12. Honkapohja, S., Koskela, E., Leibfritz, W. and Uusitalo, R. (2008): Economic Prosperity Recaptured:The Finnish Path from Crisis to Fast Growth, MIT Press. https://www.researchgate.net/publication/227458318_Economic_Prosperity_Recaptured_The_Finnish_Path_from_Crisis_to_Rapid_Growth
13. Lindbeck, A. (2006): The Welfare State – Background, Achievements, Problems, Research Institute of Industrial Economics, Working paper No. 662, Stockholm (https://www.ifn.se/Wfiles/wp/wp662.pdf)
14. Lundberg E. (1985). The Rise and Fall of the Swedish Modell. Journal of Economic Literature, 1985, vol. 23, issue 1, 1-36.
15. Marangos, John (2005). Shock Therapy and its Consequences in Transition Economies// Development (2005) 48(2), 70–78. doi:10.1057/palgrave.development.1100136.
16. Moses, Julia (2019). "The Reluctant Planner: T. H. Marshall and Political Thought in British Social Policy". In Goldman, Lawrence (ed.). *Welfare and Social Policy in Britain Since 1870: Essays in Honour of Jose Harris*. Oxford: Oxford University Press. p. 127. doi:10.1093/oso/9780198833048.003.0007
17. Tarmo Valkonen and Vesa Vihriälä (2014). The Nordic model – challenged but capable of reform. Nordic Council of Ministers 2014. http://norden.diva-portal.org/smash/get/diva2:715939/FULLTEXT02.pdf
18. Torben M. Andersen, Bengt Holmström, Seppo Honkapohja, Sixten Korkman, Hans Tson Söderström, Juhana Vartiainen (2007) THE NORDIC MODEL: Embracing globalization and sharing risks. Printed in Yliopistopaino, Helsinki, 2007. 167p. (https://economics.mit.edu/files/5726)

19. Tragatdh L., (2013). The secret of their success // The Nordic countries are probably the best-governed in the world// https://www.economist.com/special-report/2013/01/31/the-secret-of-their-success
20. https://databank.worldbank.org/source/world-development-indicators, https://stats.oecd.org/
21. https://tradingeconomics.com/sweden/competitiveness-rank
22. http://www.globalinnovationindex.org/

ՇՎԵԴԻԱՅԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄՈԴԵԼԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՈՒՍԱՆԵԼԻ ԿՈՂՄԵՐԸ

ԱՏՈՄ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ՍՈՆԱ ՄԱՐԳԱՐՅԱՆ
ԱՆԴՐԱՆԻԿ ՄԱՐԳԱՐՅԱՆ

Համառոտագիր: **Հոդվածի արդիականությունը:** Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է այդ երկրին բնորոշ տնտեսական բարեփոխումների փորձի առանձնահատկությունների բացահայտման անհրաժեշտությամբ և այդօրինակ բարեփոխումներ իրականացնող երկրների, այդ թվում և՝ Հայաստանի Հանրապետությունում ընթացող տնտեսական վերափոխումների արդյունքերի վերաիմաստավորման, ինչպես նաև դրանց ճշգրտման նպատակահարմարությամբ:

Հոդվածի նպատակը, խնդիրները և մեթոդաբանությունը: Հետազոտության **նպատակը** Շվեդիայի տնտեսական զարգացման մոդելի յուրահատկությունների համակողմանի ուսումնասիրությունն է, դրա լավագույն տարրերի բացահայտումը ու այլ երկրների, մասնավորապես՝ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների ընթացքում դրանց տեղայնացման ու կիրառման հնարավորությունների ու ուղիների նախանշումը: Հոդվածում **խնդիր է դրվել** վերլուծել Շվեդիայի տնտեսական վերելքին բարենպաստող հիմնական ինստիտուցիոնալ և մակրոկարգավորման գործոններն ու գործիքակազմերը, պետության կողմից եկամուտների վերաբաշխման սոցիալամետ ու հավասարակշռված քաղաքականությունը, արհմիությունների և գործատուների փոխհամաձայնեցված գործողությունները բարեփոխումների քաղաքականության ընդհանուր օրակարգ ձևավորելու և իրագործելու շրջանակներում: Հոդվածի **մեթոդաբանությունը** հանգում է Շվեդիայի տնտեսությանը վերաբերող վիճակագրական շարքերի ձևավորման, տվյալների համակարգչային մշակման ու վերլուծության, համեմատական, պատմական, տրամաբանական, էքստրապոլյացիոն, ինդուկցիայի և դեդուկցիայի մեթոդների տարբեր կոմբինացիների համակարգված օգտագործմանը:

Ստացված հիմնական արդյունքները: Ըստ ուսումնասիրության՝ Շվեդիայի տնտեսական մոդելի ու օրինակելի զարգացման հաջողվածության հիմնապայ-

մանը բարեփոխումների քաղաքականության մշտական համադրումն ու ճշգրտումն է դրանց սոցիալական ազդեցությունների, հավասար հնարավորությունների ապահովման ու եկամտի հնարավորինս արդար բաշխման սկզբունքների ու պահանջների հետ: Շվեդիայի ինստիտուցիոնալ տրանսֆորմացիայի պատասխանատուները մշտապես հաշվի են նստել հասարակության բոլոր շերտերի ու խավերի կենսամակարդակի ու ամբողջության մեջ՝ կյանքի որակի վրա ազդեցությունների ու դրանց սոցիալական հետևանքների հետ:

Հոդվածի գիտական նորույթը: Հոդվածում հիմնավորվել է այն թեզը, որի համաձայն՝ հանքային ռեսուրսներով ու էներգակիրներով ոչ հարուստ երկրները կարող են զարգացման ու արդիականցման թռիչք ապահովել միայն այն պարագայում, եթե կառավարող վերնախավերը բարեփոխումների միջանկյալ արդյունքները մշտապես համադրեն խելամիտ ու հավասարակշռված սոցիալական քաղաքականության հետ և վերափոխումների բոլոր փուլերում ստանան հասարակության լայն զանգվածների աջակցությունը, ինչպես նաև պայմաններ ստեղծեն հանրային և տնտեսական կյանքում նրանց հնարավորինս լայն ներգրավվածության համար:

Ստացված արդյունքների կիրառման հնարավորությունները Հայաստանի Հանրապետությունում: Շվեդիայի տնտեսության զարգացման փորձի բազմաթիվ տարրեր, մասնավորապես՝ բարեփոխումների քաղաքականության տեմպերի, սոցիալական բեռի բաշխման, արագության և արդունավետության, սոցիալական ազդեցությունների հաշվառման ու գնահատման ուղենիշները համապատասխան գործիքակազմերով հնարավոր է տեղայնացնել ու կիրառել Հայաստանի Հանրապետությունում: Այդ կիրառությունները հանգում են հետևյալին.

ա. իրականացվող տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների քաղաքականության միջանկյալ արդյունքները մշտապես պետք է ճշգրտվեն և համադրվեն հասարակության մեջ ըստ եկամտի բաշխման համամասնությունների հետ, որոնց գնահատման հիմնական չափանիշը Ջինիի գործակիցն է:

բ. Տնտեսության տեխնոլոգիական արդիականցման համար անհրաժեշտ ռեսուրսների ձեռքբերման հիմնական աղբյուրները պետք է հանդիսանան Հայաստանի Հանրապետության հանքային հարստություններից ստացվող բարձր ռենտային եկամուտները և ռոյալթիները: Այդ նպատակով անհրաժեշտ է վերանայել ՀՀ հանքահումքային ոլորտի նկատմամբ վարվող ընդհանուր կարգավորումների և հարկային քաղաքականությունը:

գ. Շվեդիայի տնտեսական զարգացման փորձը հուշում է, որ Հայաստանի Հանրապետության տնտեսական բարեփոխումների քաղաքականության համար անհրաժեշտ ռեսուրսները արտաքին պարտքի ավելացման հաշվին ունի իր սահմանները, որոնք չեն կարող գերազանցել երկրի ՀՆԱ-ի 35-40 տոկոսը: Ելնելով այդ հանգամանքից՝ անհրաժեշտ է էապես նվազեցնել ՀՀ արտաքին պարտքի բեռը, բյուջեի պակասուրդի մնացյալ հատվածը լրացնել, մի կողմից, պետական ներքին փոխառությունների ավելացման, մյուս կողմից՝ պետական ծախսերի որոշակի մասի (մասնավորապես՝ պետական ապարատի պահպանման գծով) կրճատման միջոցով:

Բանալի բառեր՝ շվեդական մոդել, արդիականացում, բարեփոխումներ, սոցիալամետ քաղաքականություն, տնտեսական թռիչք, համընդհանուր բարօրության պետություն, արհմիություններ, կոնսենսուս, մրցունակություն, արտադրողականություն

ОСОБЕННОСТИ И ПОУЧИТЕЛЬНЫЕ АСПЕКТЫ ШВЕДСКОЙ МОДЕЛИ ЭКОНОМИЧЕСКОГО РАЗВИТИЯ

АТОМ МАРГАРЯН
СОНА МАРГАРЯН
АНДРАНИК МАРГАРЯН

Аннотация: **Актуальность статьи.** Актуальность изучения шведской модели экономического развития обусловлена необходимостью выявления особенностей экономических реформ этой страны и целесобразностью переосмысления и в корректировке результатов экономической трансформации в Республике Армения.

Цель статьи, задачи и методология исследования. Целью данного исследования является изучение характерных элементов модели экономического развития Швеции, выявление его лучших элементов и на этой основе определение возможности и пути их локализации в Республике Армения и других транзитивных стран. В статье была поставлена задача проанализировать основные институциональные и макрорегулирующие факторы и инструменты, способствующие экономическому развитию Швеции, сбалансированной и социально ориентированной государственной политике перераспределения доходов, взаимовыгодного взаимодействия профсоюзов и работодателей в рамках формирования общей повестки и осуществления экономических реформ. Методология статьи заключается в скоординированном использовании статистического, сравнительного, исторического, логического, экстраполяционного, индукционного, дедукционного и других методов анализа.

Основные результаты исследования. Согласно исследованию, успех шведской экономической модели и образцовой политики реформ является соблюдение принципа обеспечения равных возможностей экономической активности и по возможности справедливого распределения доходов между всеми слоями общества. Ответственные за институциональную трансформацию Швеции всегда учитывали социальные последствия и требования воздействий реформ на жизненный уровень и качество жизни всех слоев общества.

Научная новизна статьи. В статье был обоснован тезис, согласно которому страны, не имеющие богатые минеральные и энергетические ресурсы, могут обеспечить развитие и модернизацию, если управляющие элиты всегда сопоставляют промежуточные результаты реформ с разумной и сбалансированной социальной политикой и получают поддержку широкой общественности на всех этапах трансформации, а также создают для них условия широкой привлеченности в общественной и экономической жизни.

Возможности для использования результатов исследования в Республике Армения. Многие элементы шведского опыта в области развития экономики, в частности, рекомендации по темпам реформ, социальной нагрузки, скорости и

эффективности, социальных последствий возможны для локализации и применения в Республике Армения.

Их применение заключаются в следующем:

а. одним из уроков шведского опыта заключается в том, что в процессе политики экономических и институциональных реформ в Республике Армения промежуточные результаты должны постоянно сопоставляться с пропорциональностью распределения доходов всех слоев общества основным критерием которого является коэффициент Джини.

б. Основными источниками ресурсов, необходимых для технологической модернизации экономики должны быть получены от высоких рентных доходов и лицензионных платежей (роялти) от горнодобывающих компаний. Для этого необходимо пересмотреть налоговую и регулирующую политику в отношении горнодобывающих компаний.

в. Шведский опыт экономического развития свидетельствует о том, что ресурсы, необходимые для политики экономических реформ Республики Армения за счет увеличения внешнего долга имеет свои пределы, которые не могут превышать 35-40 % ВВП страны. Исходя из этого обстоятельства, необходимо значительно уменьшить бремя внешнего долга Республики Армения, а оставшийся сегмент дефицита бюджета заполнить за счет увеличения государственных внутренних займов, с другой стороны урезать некоторые статьи затрат госбюджета (в частности, затраты финансирования государственного аппарата).

Ключевые слова: шведская модель, модернизация, реформы, социальная политика, экономический прыжок, государство всеобщего благосостояния, профсоюзы, консенсус, конкурентоспособность, производительность

FEATURES AND INSTRUCTIVE ASPECTS OF THE SWEDISH MODEL OF ECONOMIC DEVELOPMENT

ATOM MARGARYAN
SONA MARGARYAN
ANDRANIK MARGARYAN

Abstract. **Relevance of the article.** The relevance of studying the Swedish model of economic development is due to the need to identify the features of economic reforms in this country and the desirability of rethinking and adjusting the results of economic transformation in the Republic of Armenia.

The purpose of the article, tasks and research methodology. The aim of this study is to study the characteristic elements of the Swedish economic development model, to identify its best elements and, on this basis, to determine the possibilities and ways of their localization in the Republic of Armenia and other transitional countries. In the article, the task was set to analyze the main institutional and macro-regulatory factors and instruments that contribute to the economic development of Sweden, a balanced and socially oriented state policy for the redistribution of income, mutually beneficial interaction between trade unions and employers within the framework of the formation of a common agenda and implementation of economic reforms. The methodology of the article consists of the coordinated use of statistical, comparative, historical, logical, extrapolation, induction, deduction and other methods of analysis.

The main results of the study. According to the study, the success of the Swedish economic model and exemplary reform policy is based on the principle of ensuring equal opportunities for economic activity and, if possible, equitable distribution of income among all sectors of society. Those responsible for institutional transformation in Sweden have always taken into account the social consequences and demands of the impact of reforms on the living standards and quality of life of all sectors of society.

Scientific novelty of the article. The article substantiates the thesis that countries that do not have rich mineral and energy resources can ensure development and modernization if the ruling elites always compare the intermediate results of reforms with a reasonable and balanced social policy and receive support from the general public at all stages of transformation, as well as create for them the conditions of wide involvement in social and economic life.

Opportunities to use research results in the Republic of Armenia.

Many elements of Swedish experience in the field of economic development, in particular, recommendations on the pace of reform, social burden, speed and efficiency, social consequences are possible for localization and application in the Republic of Armenia.

These applications are as follows:

a. One of the lessons of the Swedish experience is that in the process of economic and institutional reform policies in the Republic of Armenia, intermediate results must be constantly compared with the proportion to the distribution of income of all sectors of society the main criterion of which is the Ginny coefficient.
b. The main sources of resources required for technological modernization of the economy should be obtained from high rental income and license payments (royalties) from mining companies. To do this, it is necessary to revise the tax and regulatory policy regarding mining companies.
c. Swedish Economic Development Experience suggests that the resources necessary for the policy of economic reforms of the Republic of Armenia due to an increase in external debt has its limits that cannot exceed 35-40% of the country's GDP. Based on this circumstance, it is necessary to significantly reduce the burden of external debt of the Republic of Armenia, and the remaining segment of the budget deficit is to fill out due to an increase in government internal loans, on the other hand, to cut some articles of the state budget costs (in particular, the cost of financing the state apparatus).

Keywords: Swedish model; modernization; reforms; social politics; economic jump; welfare state; unions; consensus; competitiveness; performance